ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 18-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառու կազմակերպության գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6 գնման պայմանագրի

ք. Երևան 30.10.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 18.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի կատարման ժամկետ սյունակում <<150>> թիվը փոխարինել <<180>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ, 6/6
կառավարական տուն 3	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Զեյթուն մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 163518011545
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00883641
Հ/Հ 900011019156,	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.